ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2-1

ք. Երևան «21» հունվար 2020թ.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամն, ի դեմս ռեկտոր Ռ.Զ.Մարուխյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ցիկլոիդ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արման Երիջանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __2__ օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 7.512.657 (յոթ միլիոն հինգ հարյուր տասներկու հազար վեց հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն

ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է __16__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ	ՑԻԿԼՈԻԴ ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105	Հասցեն՝ Ք.Երևան, Նորք Մարաշ թաղամաս, Նորքի 1 նրբ. 5
Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ	Բանկը՝ «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800109943100	Հ/Հ 16048550841200
ՀՎՀՀ 01504054	ՀՎՀՀ 00444541
Ռեկտոր՝ Ռ.Մարուխյան	Տնօրեն՝ Ա. Երիջանյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1
«21» հունվար 2020թ. կնքված
N ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	Չափման միավոր	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	15851100	Մակարոն վերմիշել (բարձր որակի) Ագրոպրոդուկտ Պրեմիում Ֆուդ	ՀՀ ՌԴ Ագրոպրոդուկտ ՍՊԸ Պրեմիում Ֆուդ ՍՊԸ	Մակարոնեղեն անդրոժ խմորից, չափածրարված, ԳՕՍՏ 875- 92 կամ համարժեք: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը հունվարից՝ շաբաթը մեկ անգամ**	կգ.	268.00	120,064	448	ք. Երևան, Տերյան 105	448	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը
2	15612160	1-ին տեսակի ցորենի ալյուր Բաղրամյան	ՀՀ Բաղրամյանի ալրաղաց գործարան	Բարձր տեսակի, ԳՕՍՏ 26574-85, փաթեթավորումը՝ ԳՕՍՏ 26574-85: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը հունվարից՝ շաբաթը մեկ անգամ**	կգ.	250.00	179,500	718	ք. Երևան, Տերյան 105	718	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը
3	15551600	Մածուն Արզնի կաթ	ՀՀ Արզնու տոհմային ԹՏԽ ԲԲԸ	Մածուն 3,6 % յուղայնությամբ կամ սպիտակուցային 2,5 % յուղայնությամբ, 110-140 oT թթվայնությամբ, չափածրարված ապակյա տարաներում կամ առողջապահության մարմինների կողմից թույլատրված նյութերից, ՀՍՏ 120-96: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին», **Մատակարարումը հունվարից՝ շաբաթը մեկ անգամ**	կգ.	490.00	705,600	1440	ք. Երևան, Տերյան 105	1440	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը
6	15531100	Կարագ *Ֆոնտերա Լիլիտեդ*	Նոր Զելանդիա Ֆոնտերա Լիլիտեդ	Նոր Զելանդական, 82,9%,Սերուցքային, բարձր որակի, թարմ վիճակում, 82,9% կաթնայուղայնությամբ, 0,7 գր պրոտեինի պարունակությամբ, 15,7 % խոնավությամբ, 0,7գր ածխաջուր, 740 կկալ, զտաքաշը՝ 25 կգ, գործարանային փաթեթավորմամբ, ԳՕՍՏ 37-91: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին»,ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին», ՄՄ ՏԿ 033/2013 «Կաթի և կաթնամթերքի անվտանգության	կգ.	3,689.00	2,040,017	553	ք. Երևան, Տերյան 105	553	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը

				մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը հունվարից՝ շաբաթը մեկ անգամ**							
7	15421100	արևածաղկի ձեթ, ռաֆինացված, (զտած) ԷՄՋԿ	ՌԴ ԷՄՋԿ ՍՊԸ	Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, ռաֆինացված (զտված), հոտազերծված, ԳՕՍՏ 1129-2013: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին»,ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին»և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը փետրվարից՝ ամիսը մեկ անգամ**	լ	574.00	111,929	195	ք. Երևան, Տերյան 105	195	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը
9	15511210	ստերիլիզացված կաթ Արզնի կաթ	ՀՀ Արզնու տոհմային ԹՏԻՍ ԲԲԸ	Պաստերիզացված կովի կաթ 3.2 % յուղայնությամբ, 16-21 Т թթվայնությամբ, 2.6% սպիտակուց, 4.7 % ածխաջրեր, 3.2% ճարպեր, 1լ ծավալով, միանգամյա օգտագործման թղթե տարրաներով ԳՕՍՏ 13277-79: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին», ՄՄ ՏԿ 033/2013 «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը հունվարից-մայիս, սեպտեմբերից-դեկտեմբեր՝ շաբաթը մեկ անգամ**	լի.	450.00	720,000	1600	ք. Երևան, Տերյան 105	1600	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը
10	15112110	ընտանի թռչունների միս՝ Հավի կրծք Երեբունի Գետամեջի թռչնաֆաբրիկա	ՀՀ Վլադ Հակոբյան ՍՊԸ Թռչնաֆաբրիկա <<Գետամեջ 2016>> ՍՊԸ	Պաղեցված թարմ կրծքամիս, արյունազրկված, մաքուր, առանց կողմնակի հոտերի, միանգամյա օգտագործման փաթեթավորմամբ, ԳՕՍՏ 25391-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/«Սննդամթերքի մակնշման մասին», և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը հունվարից՝ շաբաթը մեկ անգամ**	կգ.	1,600.00	1,128,000	705	ք. Երևան, Տերյան 105	705	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը
11	03142510	ձու, 01 կարգ Բաղրամյանի թռչնաֆաբրիկա Լուսակերտի թռչնաֆաբրիկա	ՀՀ Բաղրամյանի թռչնաֆաբրիկա Լուսակերտի թռչնաֆաբրիկա	1-ի տեսակի սեղանի ձու, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, պահպանման ժամկետը 00 - 200 C ջերմաստիճանում 8-25 օր, արտադրող կազմակերպությունում արդյունաբերական սառնարանների պայմաններում մինուս 2-ից մինչև 00 C ջերմաստիճանում՝ 90 օրվանից ոչ ավելի, ՀՍՏ 182-99: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, **Մատակարարումը հունվարից՝ շաբաթը մեկ անգամ**	հատ	60.00	372,000	6200	ք. Երևան, Տերյան 105	6200	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը
12	15623200	Սպիտակածավար Գրեյն Միլլ	ՀՀ Գրեյն Միլլ ՍՊԸ	Ծագման երկիրը Ռուսաստանի Դաշնություն, բաց գույնի, թարմ, ԳՕՍՏ 7022-97: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին», ՄՄ ՏԿ 015/2011	կգ.	300.00	21,600	72	ք. Երևան, Տերյան 105	72	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև

				«Հացահատիկի անվտանգության մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը հունվարից-մայիս, սեպտեմբերից-դեկտեմբեր՝ ամիսը մեկ անգամ**							2020թվական ի դեկտեմբերի 30-ը
13	15332290	Ջեմեր Ավելիաց Հայրենյաց բարիքներ	<< Ավելիաց ՍՊԸ Հայրենյաց բարիքներ ՍՊԸ	Հայկական դեղձից և խնձորից, 100% բնական, առանց բուրավետիչների, գունանյութերի և կոնսերվանտների: Պաստերացված, ապակե տարրաներով. ԳՕՍՏ 7009-88, ՀՍՏ 48-94: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, **Մատակարարումը հունվարից-հուլիս, սեպտեմբերից-դեկտեմբեր՝ ամիսը մեկ անգամ**	կգ.	1,000.00	82,000	82	ք. Երևան, Տերյան 105	82	Պայմանագիր ն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվական ի դեկտեմբերի 30-ը
15	15333100	տոմատի մածուկ Արտֆուդ	ՀՀ Արտֆուդ	Բարձր տեսակի, պատրաստված թարմ լոլիկից, առանց պահածոյացնող նյութերի, ապակե տարրաներով, ծագման երկիրը Հայաստան, ԳՕՍՏ 3343-89: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը հունվարից-հուլիս, սեպտեմբերից-դեկտեմբեր՝ ամիսը մեկ անգամ**	կգ.	679.00	52,283	77	ք. Երևան, Տերյան 105	77	Պայմանագիր ն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվական ի դեկտեմբերի 30-ը
19	15331153	Ոսպ Ֆենիքս	ՌԴ Ֆենիքս ՍՊԸ	Մաքուր, չոր՝ խոնավությունը 14-17 %-ից ոչ ավելի, ԳՕՍՏ 7066-77: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին», ՄՄ ՏԿ 015/2011 «Հացահատիկի անվտանգության մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը հունվարից-հունիս, սեպտեմբերից-դեկտեմբեր՝ ամիսը մեկ անգամ**	կգ.	337.00	30,330	90	ք. Երևան, Տերյան 105	90	Պայմանագիր ն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվական ի դեկտեմբերի 30-ը
20	15614200	Բրինձ Կուբա Ռայս Միլս Մուր Ռայս Միլս	ՌԴ *Պակիստան* Կուբա Ռայս Միլս Մուր Ռայս Միլս	Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%, ԳՕՍՏ 6293-90, փաթեթավորումը՝ ԳՕՍՏ 26791-89: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին», ՄՄ ՏԿ 015/2011 «Հացահատիկի անվտանգության մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը հունվարից՝ ամիսը մեկ անգամ**	կգ.	354.00	106,200	300	ք. Երևան, Տերյան 105	300	Պայմանագիր ն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվական ի դեկտեմբերի 30-ը
21	15616000	Հնդկաձավար Կլյուչեվսկոյ Էլեվատոր	ՌԴ Կլյուչեվսկոյ Էլեվատոր ԲԲԸ	Հնդկաձավար I տեսակի, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5 % ոչ պակաս, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 70 %, գործարանային պարկերով, ծագման երկիրը	կգ.	478.00	119,500	250	ք. Երևան, Տերյան 105	250	Պայմանագիր ն ուժի մեջ մտնելու օրվանից

				Ռուսաստան, ԳՕՍՏ 5550-74, փաթեթավորումը՝ ԳՕՍՏ 26791-89: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին», ՄՄ ՏԿ 015/2011 «Հացահատիկի անվտանգության մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը հունվարից-հուլիս, սեպտեմբերից-դեկտեմբեր՝ շաբաթը մեկ անգամ**							մինչև 2020թվական ի դեկտեմբերի 30-ը
25	15831000	շաքարավազ սպիտակ Ալեքս Հոլդինգ Ագրոկոմպլեկս	ՀՀ Ալեքս Հոլդինգ ՍՊԸ Ագրոկոմպլեկս ՍՊԸ	Ճակնդեղից, սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնակների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնակների զանգվածային մասը՝0,0003%-ից ոչ ավել, ԳՕՍՏ 2194: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը հունվարից՝ շաբաթը մեկ անգամ**	կգ.	259.00	181,300	700	ք. Երևան, Տերյան 105	700	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվական ի դեկտեմբերի 30-ը
26	15872400	աղ, կերակրի, մանր Կերակրի յոդացված էքստրա	ՀՀ ,,Ավանի աղի կոմբինատ '' ՓԲԸ	էքստրա տեսակի յոդացված, յոդի զանգվածային մասը՝ 50՞10 մգ/կգ, խոնավության զանգվածային մասը 0,10% ոչ ավել, պոլիպրոպիլենային փաթեթներում, ՀՍՏ 239-2005, պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս, ծագման երկիրը Հայաստան: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը հունվարից-հուլիս, սեպտեմբերից-դեկտեմբեր՝ ամիսը մեկ անգամ**	կգ.	158.00	24,490	155	ք. Երևան, Տերյան 105	155	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվական ի դեկտեմբերի 30-ը
30	15898000	Խմորիչ Իրան Մելաս Քոմփանի	Իրան Իրան Մելաս Քոմփանի	Չոր, գործարանային փաթեթավորված «Pakmaya» կամ համարժեք, չափածրարված, խոնավությունը՝ 8 %-ից ոչ ավելի: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը մարտ, սեպտեմբեր , նոյեմբեր ամիսներին՝ ամիսը մեկ անգամ**	կգ.	1,974.00	5,922	3	ք. Երևան, Տերյան 105	3	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվական ի դեկտեմբերի 30-ը
37	15863200	թեյ, սև Պրինցեսա Գիտա	Շրի Լանկա Օրիմի ՍՊԸ	Բայխաթեյ սև տերևներով կամ հատիկավորված, պարկերով ԳՕՍՏ 1937-90 կամ ԳՕՍՏ1938-90: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և	կգ.	2,724.00	21,792	8	ք. Երևան, Տերյան 105	8	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև

				«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը մարտ-հունիս, սեպտեմբերից-դեկտեմբեր՝ ամիսը մեկ անգամ**							2020թվական ի դեկտեմբերի 30-ը
38	15511600	խտացրած կաթ իչնյա	**Ուկրաինա** իչնյանսկիյ մոլոչնո կոնսերվնիյ զավոդ բբը	*Թարմ, խտացրած կաթ շաքարով, խոնավությունը՝ 26,5 %-ից ոչ ավելի, սախարոզը 43,5 %-ից ոչ պակաս, կաթնային չոր նյութերի զանգվածային մասը՝ 28,5 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 48 ՕT-ից ոչ ավելի, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 70 %, ծագման երկիրը՝ Ուկրաինա: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին», ՄՄ ՏԿ 033/2013 «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի* ***Մատակարարումը հունվարից-հունիս, սեպտեմբերից-դեկտեմբեր՝ամիսը մեկ անգամ***	կգ	1,350.00	168,750	125	ք. Երևան, Տերյան 105	125	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվական ի դեկտեմբերի 30-ը
39	15842310	կոնֆետ, կարամել՝ Իրիս Մումու Գրանդ Քենդի	ՀՀ Գրանդ Քենդի ՍՊԸ	Կաթնային իրիս սերուցքային կարագի հավելումով, հատային փաթեթավորված, ԳՕՍՏ 6478-2014: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը հունվարից-հունիս, սեպտեմբերից-դեկտեմբեր՝շաբաթը մեկ անգամ**	կգ.	1,550.00	136,400	88	ք. Երևան, Տերյան 105	88	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվական ի դեկտեմբերի 30-ը
40	15821500	Թխվածքաբլիթներ Գրանդ Քենդի	**Գրանդ Քենդի ՍՊԸ** Գրանդ Քենդի	Շաքարային թխվածքաբլիթ կաթնային հավելումներով, հատուկ երեխաների համար,խոնավությունը՝ 3%-ից մինչև 10%, շաքարի զանգվածային պարունակությունը՝ 20%-ից մինչ 27%, յուղայնությունը՝ 3%-ից մինչև 30%, ԳՕՍՏ 24901-89: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը հունվարից՝ շաբաթը մեկ անգամ**	կգ.	1,200.00	228,000	190	ք. Երևան, Տերյան 105	190	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվական ի դեկտեմբերի 30-ը
41	15821500	թխվածքաբլիթներ՝ Կաֆլի Գրանդ Քենդի	**Գրանդ Քենդի ՍՊԸ** Գրանդ Քենդի	Կաթնային միջուկով, չափածրարված, հատային փաթեթավորված, ԳՕՍՏ 14031-68 կամ համարժեք: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, Գրանդ Քենդի **Մատակարարումը հունվարից՝ շաբաթը մեկ անգամ**	կգ.	1,600.00	240,000	150	ք. Երևան, Տերյան 105	150	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվական ի դեկտեմբերի 30-ը
42	15842110	կոնֆետ, շոկոլադապատ՝ Թռչնի կաթ Գրանդ Քենդի	ՀՀ Գրանդ Քենդի ՍՊԸ	*Շոկոլադապատ սպիտակուցային հարած զանգված՝ սերուցքային կարագի, խտացրած կաթի և վանիլինի հավելումներով, համապատասխան գործող նորմերին և ստանդարտներին (ԳՕՍՏ): Անվտանգությունը և*	կգ.	2,500.00	70,000	28	ք. Երևան, Տերյան 105	28	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից

				մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի ***Մատակարարումը հունվարից-մայիս, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին՝ շաբաթը մեկ անգամ***							մինչև 2020թվական ի դեկտեմբերի 30-ը
52	03222100	Բանան Արմ ԵԿ	Էկվադոր ,,Արմ ԵԿ Թրեյդինգ Գրուպ՝	*Թարմ, առանց վնասվածքների և ավելորդ հոտերի, համապատասխան գործող նորմերի և ստանդարտների: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի* ***Մատակարարումը հունվարից-հունիս, հոկտեմբերից-դեկտեմբեր՝ շաբաթը մեկ անգամ***	կգ.	598.00	304,980	510	ք. Երևան, Տերյան 105	510	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվական ի դեկտեմբերի 30-ը
64	15512000	Թթվասեր Արզնի կաթ	ՀՀ Արզնու տոհմային ԹՏԽ ԲԲԸ	Թարմ, անարատ կովի կաթից, յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, սպիտակուցները՝ 2.6գր, ածխաջրերը՝ 3.0 գր, թթվայնությունը՝ 65-100 Т, պահպանման ժամկետը ոչ ավել քան 10 օր: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին», ՄՄ ՏԿ 033/2013 «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, **Մատակարարումը հունվարից՝ շաբաթը մեկ անգամ**	կգ	1,200.00	342,000	285	ք. Երևան, Տերյան 105	285	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվական ի դեկտեմբերի 30-ը

ԳՆՈՐԴ
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800109943100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտոր ---------- Ռ.Մարուխյան
(ստորագրություն) Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Ցիկլոիդ ՍՊԸ
Հասցեն՝ Ք.Երևան, Նորք Մարաշ թաղամաս, Նորքի 1 նրբ. 5
Բանկը՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16048550841200
ՀՎՀՀ 00444541

Տնօրեն ---------- Ա. Երիշանյան
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 2
«21» հունվար 2020թ. կնքված
N ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հերթական համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի												
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	15851100	Մակարոն վերմիշել (բարձր որակի) Ագրոպրոդակտ Պրեմիում Ֆուդ	120,064	120,064	120,064	120,064	120,064	120,064	120,064	120,064	120,064	120,064	120,064	120,064	120,064
2	15612160	1-ին տեսակի ցորենի ալյուր Բաղրամյան	179,500	179,500	179,500	179,500	179,500	179,500	179,500	179,500	179,500	179,500	179,500	179,500	179,500
3	15551600	Մածուն Արզնի կաթ	705,600	705,600	705,600	705,600	705,600	705,600	705,600	705,600	705,600	705,600	705,600	705,600	705,600
6	15531100	Կարագ *Ֆոնտերա Լիլիտեդ*	2,040,017	2,040,017	2,040,017	2,040,017	2,040,017	2,040,017	2,040,017	2,040,017	2,040,017	2,040,017	2,040,017	2,040,017	2,040,017
7	15421100	արևածաղկի ձեթ, ռաֆինացված, (զտած) ԷՄԶԿ	111,929	111,929	111,929	111,929	111,929	111,929	111,929	111,929	111,929	111,929	111,929	111,929	111,929
9	15511210	ստերիլիզացված կաթ Արզնի կաթ	720,000	720,000	720,000	720,000	720,000	720,000	720,000	720,000	720,000	720,000	720,000	720,000	720,000
10	15112110	ընտանի թռչունների միս՝ Հավի կրծք Էրեբունի Գետամեջի թռչնաֆաբրիկա	1,128,000	1,128,000	1,128,000	1,128,000	1,128,000	1,128,000	1,128,000	1,128,000	1,128,000	1,128,000	1,128,000	1,128,000	1,128,000
11	03142510	ձու, 01 կարգ Բաղրամյանի թռչնաֆաբրիկա Լուսակերտի թռչնաֆաբրիկա	372,000	372,000	372,000	372,000	372,000	372,000	372,000	372,000	372,000	372,000	372,000	372,000	372,000
12	15623200	Սպիտակաձավար Գրեյն Միլլ	21,600	21,600	21,600	21,600	21,600	21,600	21,600	21,600	21,600	21,600	21,600	21,600	21,600
13	15332290	Ջեմեր Ավելիաց Հայրենյաց բարիքներ	82,000	82,000	82,000	82,000	82,000	82,000	82,000	82,000	82,000	82,000	82,000	82,000	82,000
15	15333100	տոմատի մածուկ Արտֆուդ	52,283	52,283	52,283	52,283	52,283	52,283	52,283	52,283	52,283	52,283	52,283	52,283	52,283
19	15331153	Ոսպ Ֆենիքս	30,330	30,330	30,330	30,330	30,330	30,330	30,330	30,330	30,330	30,330	30,330	30,330	30,330
20	15614200	Բրինձ Կուբա Ռայս Միլս	106,200	106,200	106,200	106,200	106,200	106,200	106,200	106,200	106,200	106,200	106,200	106,200	106,200

		Մուր Ռայս Միլս													
21	15616000	Հնդկաձավար Կլյուչեվսկոյ Էլեվատոր	119,500	119,500	119,500	119,500	119,500	119,500	119,500	119,500	119,500	119,500	119,500	119,500	119,500
25	15831000	շաքարավազ սպիտակ Ալեքս Հոլդինգ Ագրոկոմպլեկս	181,300	181,300	181,300	181,300	181,300	181,300	181,300	181,300	181,300	181,300	181,300	181,300	181,300
26	15872400	աղ, կերակրի, մանր Կերակրի յոդացված էքստրա	24,490	24,490	24,490	24,490	24,490	24,490	24,490	24,490	24,490	24,490	24,490	24,490	24,490
30	15898000	Խմորիչ Իրան Մելաս Քոմփանի	5,922	5,922	5,922	5,922	5,922	5,922	5,922	5,922	5,922	5,922	5,922	5,922	5,922
37	15863200	թեյ, սև Պրինցեսա Գիտա	21,792	21,792	21,792	21,792	21,792	21,792	21,792	21,792	21,792	21,792	21,792	21,792	21,792
38	15511600	խտացրած կաթ Իչնյա	168,750	168,750	168,750	168,750	168,750	168,750	168,750	168,750	168,750	168,750	168,750	168,750	168,750
39	15842310	կոնֆետ, կարամել՝ Իրիս Մումու Գրանդ Քենդի	136,400	136,400	136,400	136,400	136,400	136,400	136,400	136,400	136,400	136,400	136,400	136,400	136,400
40	15821500	Թխվածքաբլիթներ Գրանդ Քենդի	228,000	228,000	228,000	228,000	228,000	228,000	228,000	228,000	228,000	228,000	228,000	228,000	228,000
41	15821500	թխվածքաբլիթներ՝ Վաֆլի Գրանդ Քենդի	240,000	240,000	240,000	240,000	240,000	240,000	240,000	240,000	240,000	240,000	240,000	240,000	240,000
42	15842110	կոնֆետ, շոկոլադապատ՝ Թռչնի կաթ Գրանդ Քենդի	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000
52	03222100	Բանան Արմ ԵԿ	304,980	304,980	304,980	304,980	304,980	304,980	304,980	304,980	304,980	304,980	304,980	304,980	304,980
64	15512000	Թթվասեր Արզնի կաթ	342,000	342,000	342,000	342,000	342,000	342,000	342,000	342,000	342,000	342,000	342,000	342,000	342,000
1	15851100	Մակարոն վերմիշել (բարձր որակի) Ագրոպրոդուկտ Պրեմիում Ֆուդ	120,064	120,064	120,064	120,064	120,064	120,064	120,064	120,064	120,064	120,064	120,064	120,064	120,064
2	15612160	1-ին տեսակի ցորենի ալյուր Բաղրամյան	179,500	179,500	179,500	179,500	179,500	179,500	179,500	179,500	179,500	179,500	179,500	179,500	179,500
3	15551600	Մածուն Արզնի կաթ	705,600	705,600	705,600	705,600	705,600	705,600	705,600	705,600	705,600	705,600	705,600	705,600	705,600
6	15531100	Կարագ *Ֆոնտերա Լիլիփեդ*	2,040,017	2,040,017	2,040,017	2,040,017	2,040,017	2,040,017	2,040,017	2,040,017	2,040,017	2,040,017	2,040,017	2,040,017	2,040,017
7	15421100	արևածաղկի ծեթ, ռաֆինացված, (զտած) ԷՄԶԿ	111,929	111,929	111,929	111,929	111,929	111,929	111,929	111,929	111,929	111,929	111,929	111,929	111,929
9	15511210	ստերիլիզացված կաթ Արզնի կաթ	720,000	720,000	720,000	720,000	720,000	720,000	720,000	720,000	720,000	720,000	720,000	720,000	720,000
10	15112110	ընտանի թռչունների միս՝ Հավի կրծք Էրեբունի Գետամեջի թռչնաֆաբրիկա	1,128,000	1,128,000	1,128,000	1,128,000	1,128,000	1,128,000	1,128,000	1,128,000	1,128,000	1,128,000	1,128,000	1,128,000	1,128,000
11	03142510	ձու, 01 կարգ Բաղրամյանի թռչնաֆաբրիկա Լուսակերտի թռչնաֆաբրիկա	372,000	372,000	372,000	372,000	372,000	372,000	372,000	372,000	372,000	372,000	372,000	372,000	372,000
12	15623200	Սպիտակաձավար Գրեյն Միլլ	21,600	21,600	21,600	21,600	21,600	21,600	21,600	21,600	21,600	21,600	21,600	21,600	21,600

13	15332290	Ջեմեր Ավելիաց Հայրենյաց բարիքներ	82,000	82,000	82,000	82,000	82,000	82,000	82,000	82,000	82,000	82,000	82,000	82,000	82,000
15	15333100	տոմատի մածուկ Արտֆուդ	52,283	52,283	52,283	52,283	52,283	52,283	52,283	52,283	52,283	52,283	52,283	52,283	52,283
19	15331153	Ոսպ Ֆենիքս	30,330	30,330	30,330	30,330	30,330	30,330	30,330	30,330	30,330	30,330	30,330	30,330	30,330
20	15614200	Բրինձ Կուբա Ռայս Միլս Մուր Ռայս Միլս	106,200	106,200	106,200	106,200	106,200	106,200	106,200	106,200	106,200	106,200	106,200	106,200	106,200
21	15616000	Հնդկաձավար Կյուչեվսկոյ Էլեվատոր	119,500	119,500	119,500	119,500	119,500	119,500	119,500	119,500	119,500	119,500	119,500	119,500	119,500
25	15831000	շաքարավազ սպիտակ Ալեքս Հոլդինգ Ագրոկոմպլեկս	181,300	181,300	181,300	181,300	181,300	181,300	181,300	181,300	181,300	181,300	181,300	181,300	181,300
26	15872400	աղ, կերակրի. մանր Կերակրի յոդացված էքստրա	24,490	24,490	24,490	24,490	24,490	24,490	24,490	24,490	24,490	24,490	24,490	24,490	24,490
30	15898000	Խմորիչ Իրան Մեյաս Քոմփանի	5,922	5,922	5,922	5,922	5,922	5,922	5,922	5,922	5,922	5,922	5,922	5,922	5,922
37	15863200	թեյ, սև Պրինցեսա Գիտա	21,792	21,792	21,792	21,792	21,792	21,792	21,792	21,792	21,792	21,792	21,792	21,792	21,792
38	15511600	խտացրած կաթ Իչնյա	168,750	168,750	168,750	168,750	168,750	168,750	168,750	168,750	168,750	168,750	168,750	168,750	168,750
39	15842310	կոնֆետ, կարամել՝ Իրիս Մումու Գրանդ Քենդի	136,400	136,400	136,400	136,400	136,400	136,400	136,400	136,400	136,400	136,400	136,400	136,400	136,400
40	15821500	Թխվածքաբլիթներ Գրանդ Քենդի	228,000	228,000	228,000	228,000	228,000	228,000	228,000	228,000	228,000	228,000	228,000	228,000	228,000
41	15821500	թխվածքաբլիթներ՝ Վաֆլի Գրանդ Քենդի	240,000	240,000	240,000	240,000	240,000	240,000	240,000	240,000	240,000	240,000	240,000	240,000	240,000
42	15842110	կոնֆետ, շոկոլադապատ՝ Թռչնի կաթ Գրանդ Քենդ	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000
52	03222100	Բանան Արմ ԵԿ	304,980	304,980	304,980	304,980	304,980	304,980	304,980	304,980	304,980	304,980	304,980	304,980	304,980
64	15512000	Թթվասեր Արզնի կաթ	342,000	342,000	342,000	342,000	342,000	342,000	342,000	342,000	342,000	342,000	342,000	342,000	342,000

ԳՆՈՐԴ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական
համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800109943100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտոր---------- Ռ.Մարուխյան
(ստորագրություն) Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Ցիկլոիդ ՍՊԸ
Հասցեն՝ Ք.Երևան, Նորք Մարաշ թաղամաս,
Նորքի 1 նրբ. 5
Բանկը՝ «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16048550841200
ՀՎՀՀ 00444541

Տնօրեն---------- Արման Երիջանյան
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 3
« 21 » հունվար 2020թ. կնքված
N ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 21 » հունվար 2020թ. կնքված
N ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն